ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-10/13» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆԳՆՄԱՆ
ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

13-ը փետրվարի 2023թ.
Ժամը 11[00]

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝
ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲՎ պետի տեղակալ, գնդապետ Ա. Գալստյան,
գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲՎ ԶԲՖԿԾ պետ, Ա. Պապյան,
ՀՀ ՊՆ ԿՇ և ԶԲՎ ՆՏԱ բաժնի գլխավոր մասնագետ, Հ. Մկրտչյան,
Գնումները համակարգող՝
ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչության ԳԿ 3-րդ բաժնի գլխավոր մասնագետ, Ա. Մաղաքյան

Հանձնաժողովն արձանագրեց հայտերի բացման փաստը և որոշեց նիստը շարունակել մասնակիցների կողմից ներկայացված հայտերն ուսումնասիրելուց հետո:

15.02.2022թ., ժամը 11:30-ին կայացած նիստում հանձնաժողովը շարունակեց աշխատանքները.

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-10/13» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Մաղաքյան)

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակցի մասին.
2. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-10/13» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.
3. Մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4.Ներկայացված գնային առաջարկի հիման վրա՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-10/13» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված և ընտրված մասնակցի որոշման մասին.
5. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:
6. Տեղեկություններ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
7. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3 դեմ՝ 0:

1. Տեղեկություններ հայտ ներկայացրած մասնակիցի մասին.

(Ա. Մաղաքյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար «Զանազան շինարարական քարեր և դռների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-10/13» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

Հ/հ	Մասնակցի անվանումը
1.	«Արգաս» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-10/13» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.

(Ա. Մաղաքյան)

2.1 «Արգաս» ՍՊԸ-ի էլեկտրոնային հայտը էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի.

2.2 «Արգաս» ՍՊԸ-ի էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

2.3 «Արգաս» ՍՊԸ-ի հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-10/13» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, ***բացառությամբ հետևյալ դեպքի՝***

«Արգաս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրում Հավելված 1.3-ում լրացված չեն՝

* 4. Իրական շահառու տվյալները բաժնի 4.1 ենթաբաժնի **4.1.6 կետը՝ ծննդյան օրը, ամիսը, տարին**
* 4.2 Անձը հաստատող փաստաթուղթը բաժնի 4.2.1 փաստաթղթի տեսակը ենթաբաժնում լրացված է **Արթուր Մարգարյան,** այնինչ անհրաժեշտ է լրացնել ***իրական շահառու անձը հաստատող փաստաթղթի տեսակը***
* 4.3 Անձի հաշվառման հասցեն բաժնի 4.3.1, 4.3.2, 4.3.3, 4.3.4 ենթաբաժինները՝
* 4.4 Անձի բնակության հասցեն բաժնի 4.4.1, 4.4.2, 4.4.3, 4.4.4 ենթաբաժինները՝

* 4.7 Իրական շահառուի կարգավիճակի վերաբերյալ տեղեկությունները բաժնի 4.7.1, 4.7.2 և 4.7.3 ենթաբաժինները՝

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել **«Արգաս» ՍՊԸ-ին** մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

17.02.2023թ., ժամը 11:30-ին կայացած նիստում հանձնաժողովն արձանագրեց, որ «Արգաս» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում և կարգով շտկվել են արձանագրված անհամապատասխանությունները և վերջինիս հայտը գնահատվեց բավարար՝ հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.

(Ա. Մաղաքյան)

3.1 Գնային առաջարկ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

Հ/հ	Գնման առարկա	Հ/մ	Քանակը	Գնման գումարը	Մրցույթին մասնակցող կազմակերպության			
					Անվանումը	Գնային առաջարկ /ՀՀ դրամ/		
						Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գին
1.	Զանազան շինարարական քարեր՝ (Քար ուղիղ կտրվածքի)	խ.մ	1,000	12,000,000	«Արգաս» ՍՊԸ	11650000	0	11650000
2.	Դռներ՝ (Դուռ երկաթյա 1x2մ)	ք.մ	40	1,120,000	Գնային առաջարկի բացակայություն			

3.2 «Արգաս» ՍՊԸ-ի գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը (հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը), ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունը համապատասխանում են (ճիշտ են):

3.3 Ըստ ներկայացված տվյալների՝ «Արգաս» ՍՊԸ-ն ԱԱՀ վճարող չէ:

3.4 «Արգաս» ՍՊԸ-ի հետ բանակցություն չի վարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկի հիման վրա՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-10/13» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակցին ընտրված մասնակցի ճանաչելու մասին.

(Ա. Մաղաքյան)

4.1 **20.02.2023թ.-ին՝** հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը, Armeps (www.armeps.am) համակարգում էլեկտրոնային գնահատման արդյունքում, գնահատող հանձնաժողովը որոշեց ներկայացված գնային առաջարկի հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-10/13» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարար գնահատված **«Արգաս» ՍՊԸ-ին** 1-ին չափաբաժնի մասով ճանաչել ընտրված մասնակից.

4.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-10/13» ծածկագրով գնման ընթացակարգը՝ 2-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջները՝ (ոչ մի հայտ չի ներկայացվել):

4.3 Գնահատող հանձնաժողովը հաստատեց «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-10/13» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը: **Սույն ընթացակարգի շրջանակում անգործության ժամկետ չի կիրառվել, քանի որ հայտ ներկայացրած մասնակիցը միակն էր:**

4.4 Գնահատող հանձնաժողովը որոշեց «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-10/13» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածների պահանջները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:

(Ա. Մաղաքյան)

5.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-10/13» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

6. Հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

(Ա. Մաղաքյան)

6.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

7. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Մաղաքյան)

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-23-10/13» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը անցկացնել ոչ ուշ, քան գնման լիազմանագիր չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ժամը 11:00-ն, ք. Երևան Բագրևանդի 5 հասցեում՝ ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ) Ա. Գալստյան

Գնահատող Ա. Պապյան

Գնահատող Հ. Մկրտչյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Մաղաքյան